ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA
EU4Youth

Green lane

CENN
Caucasus Environmental NGO Network

ՀՈՒՇԱԳԻՐ

Կանաչ Արահետ հասարակական կազմակերպության և Երևանի Պետական Համալսարանի Իջևանի մասնաճյուղի միջև՝ Տավուշի մարզի Իջևան քաղաքում երիտասարդական նորարարական գիտելիքների ՀԱԲ-ի ստեղծման և սոցիալական կանաչ ձեռներեցության էկոհամակարգի զարգացման ոլորտում համագործակցության մասին

13/07/2021

Հուշագիրը հիմնված է հետևյալ դրույթների վրա

- **Եվրամիության կանաչ գործարք (European Green Deal)**, որը նպաստում է կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացիայի արձագանքմանը ռեսուրսների արդյունավետ օգտագործման, աղտոտման նվազեցման և կենսաբազմազանության վերականգնման գործողությունների միջոցով:

- **ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (UN SDGs) փաստաթուղթ,** մասնավորապես, 4.4, որի նպատակն է 2030-ին ավելացնել այն երիտասարդների և մեծահասակների թիվը, ովքեր կունենան աշխատանքի և ձեռնարկատիրության համար հարմար տեխնիկական և մասնագիտական հմտություններ:

- **EU4Youth – ԵՄ երիտասարդական ծրագրի հիմնական նպատակներ և արժեքներ**, որոնց նպատակն է ներառական միջավայր ստեղծել երիտասարդների, այդ թվում՝ առավել խոցելի խմբերի և խթանել նրանց զբաղվածությունը Արևելյան գործընկերության երկրներում՝ ձեռնարկատիրական ուղղվածության զարգացման միջոցով:

- **EU4Youth - SEED (Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացում) կանաչ աճի համար ծրագրի նպատակներ**, որոնք ներառում են սոցիալական և կանաչ ձեռներեցության ոլորտում երիտասարդների հնարավորությունների զարգացում, ինչպես նաև աջակցություն կանաչ նորարարություններին՝ սահմանամերձ շրջաններում խոցելի երիտասարդների զբաղվածությունը բարձրացնելու համար:

ՆԱԽԱԲԱՆ

Կանաչ Արահետ ՀԿ-ի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի նպատակն է EU4Youth-SEED ծրագրի շրջանակներում կանաչ առաջընթացի համար խթանել սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացումը Լոռու մարզում: Ծրագրի հիմնական ուղղությունն է Վրաստանում և Հայաստանում բարենպաստ պայմաններ ստեղծել սոցիալական ձեռներեցության և կանաչ նորարարության զարգացման համար:

Ստորագրող կողմերը գիտակցում են Հայաստանում զբաղվածության և կրթության զարգացման կարևոր դերը, հատկապես սոցիալական ձեռներեցության ոլորտում:

Կողմերը, վերլուծելով կանաչ սոցիալական ձեռներեցության ոլորտում երիտասարդների հմտությունների զարգացման անհրաժեշտությունը, նրանց համար ստեղծում են հավասար հնարավորություններ, առաջարկում են ընդհանուր աշխատանքային տարածք և ապահովում են կանաչ սոցիալական ձեռներեցության ոլորտում լավագույն փորձը փոխանակում:

Կողմերը հատկապես կարևորում են ներառական միջավայրի ստեղծումը, որտեղ խոցելի երիտասարդները կկարողանան անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել՝ աշխատաշուկայում իրենց մրցունակությունը բարձրացնելու համար:

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ստորագրելով հուշագիրը՝ կողմերը սկզբունքների հիման վրա ստեղծում են կամավոր համագործակցության հարթակ:

1.2 Հարթակը բաց է լայն համագործակցության և լրացուցիչ շահագրգիռ կողմերի ներգրավման համար:

1.3 Համագործակցությունը հիմնված է երիտասարդների կարիքների և այլ սոցիալական կամ կրթական մարտահրավերների վրա:

1.4 Համագործակցության շրջանակներում պատրաստված/ստեղծված տեղեկությունը հանրային է: Կողմերը կարող են ինքնուրույն որոշում կայացնել իրենց կողմից ստեղծված այս կամ այն տեղեկության մեկ այլ անձի փոխանցման և խորհրդատվության վերաբերյալ:

1.5 Կողմերը կարող են քննարկել համագործակցության լրացուցիչ մեխանիզմներ և սահմանել միջոցառումներ դրանք իրականացնելու համար:

2. Նպատակներն ու խնդիրները

Հուշագրի նպատակն է Կանաչ Արահետ ՀԿ-ի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջև բազմակողմանի համագործակցության ձևավորումը՝ նորարարական գիտելիքների հանգույց ստեղծելու և կանաչ ձեռներեցության ոլորտը զարգացնելու համար:

Նորարարական գիտելիքի հանգույցի գործունեությունը ենթադրում է՝

- Միավորված գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում, Լոռի, Տավուշ և Շիրակ մարզերի երիտասարդների համար
- Անվտանգ, հարմարավետ աշխատանքային տարածքի տրամադրում
- Պաշտոնական և ոչ ֆորմալ կրթության համար տարածքի հասանելիություն
- Դասընթացների, սեմինարների և տարբեր միջոցառումների կազմակերպում սոցիալական ձեռներեցության ոլորտում
- Աջակցություն երիտասարդներին հետագա զբաղվածություն ապահովելու գործում

Տարածաշրջանային մակարդակում երիտասարդներին հզորացումը կարևոր է ինչպես ձեռներեցության էկոհամակարգի զարգացման, այնպես էլ բնապահպանական մարտահրավերների, քաղաքացիական ակտիվության և ինքնագիտակցության իրազեկումը բարձրացման համար:

Մարզային մակարդակում նորարարական գիտելիքների հանգույցների ստեղծումը ծառայում է հետևյալ նպատակներին՝

2.1 Սոցիալական և կանաչ ձեռներեցության մասսայականացում երիտասարդների շրջանում,

2.2 Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացում և երիտասարդների զբաղվածության բարձրացում,

2.3 Երիտասարդների համար նորարարական ոչ ֆորմալ կրթության ապահովում, երիտասարդների իրազեկության բարձրացում շրջակա միջավայրի մարտահրավերների և հնարավորությունների վերաբերյալ,

2.4 Երիտասարդների շրջանում քաղաքացիական և բնապահպանական ակտիվության զարգացում,

2.5 Երիտասարդների շրջանում աշխատանքային հմտությունների զարգացում:

3. Գործունեության /համագործակցության ձևը

3.1 Հաբերի կոնտակտային անձանց միջև անխափան կապի հաստատում, նորարարական գիտելիքների հանգույցների ծրագրերի առաջարկների ապահովում երիտասարդներին,

3.2 Կանաչ Արահետի հետ ակտիվ հաղորդակցության արդյունքում 2021-2023 թվականների հանգույցների գործողությունների պլանների նախապատրաստում և իրականացում,

3.3 Ծրագրի ավարտից՝ 2023թ-ից հետո, գործնընկերային հարաբերությունների ձևավորում և համագործակցության ընդլայնում կողմերի միջև

3.4 Երիտասարդներին հանրային տեղեկատվության տրամադրման և հասարակական գործընթացներին մասնակցության ապահովում,

3.5 Համապատասխան գործողությունների պլանավորման և իրականացման գործում շահագրգիռ կողմերի, մասնակիցների և շահառուների շահերի ապահովում,

3.6 Հաբերի գործունեության մշակման և իրականացման մեջ անմիջականորեն ներգրավված լինելու պատրաստակամություն, համատեղ սեմինարների մասնակցություն,

3.7 Գործունեության ընթացքում հայտնաբերված մարտահրավերների և հետագա գործողությունների մասին քննարկումներ:

4. Անցումային դրույթներ

4.1 Կողմերը կարող են վերանայել և կատարելագործել Հուշագիրը՝ համատեղ գործունեության զարգացման անհրաժեշտությունից ելնելով:

4.2 Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 տարի:

4.3 Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել հուշագիրը՝ նախնական գրավոր ծանուցմամբ:

4.4 Հուշագիրը կազմված է հայերենով 2021 թ. ապրիլի 8-ին, 5 օրինակով: Բոլոր օրինակները հավասարազոր են:

Փոխըմբռնման հուշագրի կողմերը

Կանաչ Արահետ ՀԿ, նախագահ՝
Նունե Սարուխանյան

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, տնօրենի պաշտոնակատար
Անուշավան Մակարյան